

ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ «ՀԱԻԱՔՈՒՄՆ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ, ԶՈՐ ՅԱՌԱՋԱԳՈՅՆ ԱՐԱՐԵԱԼ Է ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐ ՀԱՐՅՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ եկեղեցական մատենագրությունը հարուստ է ս. հաղորդության խորհրդի և նրա արարողության վերաբերյալ բազմաթիվ մեկնողական աշխատություններով:

Դժբախտաբար մինչև այժմ բանասիրության կողմից քիչ աշխատանք է արված այդ գործերի հայտնաբերման և ուսումնասիրության ասպարեզում:

Մեր այս հոդվածի նպատակն է բանասերների ուշադրությանը հանձնել մինչև այժմ մոռացության մատնված Մովսես վրդ. Երզնկացու Պատարագի մեկնությունը:

Հայ մատենագրության մեջ, ս. հաղորդության խորհրդի մասին գրված աշխատությունները գալիս են դեռ վաղ դարերից, այսպես՝

ա.—Եզնկայ Կողբացւոյ Վասն հաղորդողաց[1]:

բ.—Յովհ. Մանդակունւոյ Վասն զգուշութեամբ մերձենալոյ ի մարմին և յարիւն Որդւոյն Աստուծոյ[2]:

գ.—Յովհ. Որոտնեցւոյ Վասն սուրբ պատարագին[3], և այլն:

Սակայն Պատարագամատույցի առաջին լիարժեք մեկնությունը հայ եկեղեցու նշանավոր հայր Խոսրով եպս. Անձևացու (Ժ դար) գրչի և մտքի արդյունքն է: Սույն մեկնությունը տպագրվել է Վենետիկում, 1869 թվականին, հետևյալ վերնագրով. «Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի մեկնութիւն Աղօթից Պատարագին»:

Պատարագամատույցի հաջորդ մեկնություններից հայտնի և տպագրված են Ներսես Լամբրոնացու և Հովհան Արճիշեցու գործերը: Սրանցից հատկապես արժեքավոր է Ներսես Լամբրոնացու աշխատությունը, որը ունեցել է երկու տպագրություն՝ Երուսաղեմում՝ 1842 թ., և Վենետիկում՝ 1847 թ.:

Այստեղ պետք է նշել այն, որ վերոհիշյալ երկու՝ Խոսրով Անձևացու և Ներսես Լամբրոնացու մեկնությունները հիմք և կարեվոր աղբյուր են հանդիսացել հետագա բոլոր մեկնությունների համար:

Այսպես. Հովհան Արճիշեցու Պատարագի մեկնությունը ունեցել է 3 տպագրություն՝ Կոստանդնուպոլիս, 1799 թ., Կալկաթա, 1830 թ. և Էջմիածին, 1860 թ.: Երրորդ հրատարակությունը վերնագրված է այսպես.

---

[1] Տես Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև Մատենադարանի) № 80 ձեռագիրը:

[2] Տես Մատենադարանի №№ 1236, 1356, 2168 և այլ ձեռագրերը: Նաև՝ «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի Ճառք», Վենետիկ, 1860 թ., էջ 165—173:

[3] Տես Մատենադարանի № 2567 ձեռագիրը:

«Մեկնութիւն Աւետարանի Խորհրդոյ Սրբոյ Պատարագին

Արտահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և Ներսեսի Լամբրոնացւոյ, կարճելով և պարզաբանելով

Յովհաննու Արճիշեցւոյ»:

Ահա գրեթե այսպիսի աշխատություն է նաև մինչև այժմ միայն ձեռագրացուցակ կազմողներին ծանոթ Մովսես Երզնկացու Պատարագի մեկնությունը:

Հիշենք, որ մեզ են հասել նաև մի շարք այլ մեկնություններ հետևյալ անուններով՝ Հովհաննես Երզնկացու[4] (Պլուզ) (+1293 թ.), Վարդան Արևելցու[5], Անանունի[6] և այլն:

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾ ՄՈՎՍԵՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ

Մովսես Երզնկացին եղել է իր ժամանակաշրջանի զարգացած հոգևորականներից մեկը: Ծնվել է 1250-ական թվականներին, Երզնկայի մոտ գտնվող Կամախ-Անի բնակավայրում: Մանուկ հասակից ուսանել է Երզնկայի Ավագ վանքում, ուր և ընդունել է կուսակրոն քահանայության կարգը:

Այնուհետև Երզնկացին ճանապարհորդել է Արևելյան Հայաստանում և Կիլիկիայում: Կիլիկիայում նա աշակերտել է ժամանակի նշանավոր վարդապետ Գևորգ Սկևռացուն[7] (+1301 թ.), որը որոշ ձեռագրերում կոչվում է նաև Լամբրոնացի:

Մովսես Երզնկացին Կիլիկիայից վերադարձել է Երզնկա, ուր հիմնել է ս. Աստվածածին վանքը և զբաղվել ուսուցչությամբ ու հասցրել բազմաթիվ աշակերտներ: Իր ժամանակակիցների և հաջորդների կողմից կոչվել է «գերահռչակ ռաբունապետ»:

Երզնկացին մահացել է Երզնկայում, 1323 թվականին:

Մովսես Երզնկացուց մեզ են հասել բազմաթիվ գրական աշխատանքներ, որոնցից արժե հիշատակել հետևյալները.

ա.—«Մեկնութիւն Ժամակարգութեան», տպագրված Կոստանդնուպոլսում, երկու անգամ՝ 1737 և 1840 թվականներին:

բ.—«Ոսկեփորիկ»—Սրբոց վարքերի և Սուրբ Հայրերի խրատական խոսքերի ժողովածու: Տես Վենետիկի № 986, Վիեննայի № 791 և Երևանի Մատենադարանի № 576 ձեռագրերը:

գ.—Ճառ իր ուսուցիչ Գևորգ Լամբրոնացու մահվան առթիվ, 1301 թ. հունվարի 11: Տպված է Ալիշանի «Հայապատում»-ի մեջ, Վենետիկ, 1901 թ., էջ 504—507:

դ.—«Խրատք կանոնականք առ ամենայն եկեղեցիս Հայաստանեայց»: (Գրված է ռամիկին հասկանալի լեզվով): Տես Մատենադարան №№ 502, 1677, 2020, 2564, 5349, 10236 և այլ ձեռագրեր, ինչպես նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրատան №№ 11, 792, 1458 և այլ ձեռագրերը:

ե.—«Պատասխանի թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալ երեցն Գրիգոր»: Տես Մատենադարանի №№ 20, 502, 503, 576, 577, 583 և այլ ձեռագրերը, ինչպես նաև Երուսաղեմի № 773 ձեռագիրը:

զ.—Բողոք Անավարզեցի կաթողիկոսի և Լևոն Դ թագավորի դեմ, մի ուժեղ գրություն, որից հատվածներ կան տպված Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ, Վաղարշապատ, 1893 թ., էջ 258—259:

է.—«Կարգ թագաւորացն Հայոց ըստ Մովսէս Խորենացւոյ»: Տես Մատենադարանի №№ 502, 503, 576, 605 և այլ ձեռագրերը:

ը.—«Դաւանութիւն Հաւատոյ» կամ «Բան պատասխանատուութեան ուղղափառ Հաւատոյ»: Տես Մատենադարանի №№ 108, 2174 և այլ ձեռագրերը:

թ.—«Սակս ջրոյ խառնման»: Տես Մատենադարանի №№ 774, 2268 և այլ ձեռագրերը:

ժ.—«Հաւաքեալ վկայութիւնք (ի Ներսիսէ, ի Սոկրատայ, ի Հարցողաց Բարսղի)»: Տես Մատենադարանի №№ 581 և 2174 ձեռագրերը:

[4] Տես Մատենադարանի №№ 2993, 3119, 3433 ձեռագրերը:

[5] Տես Մատենադարանի №№ 1431, 1712, 1760 և այլ ձեռագրեր:

[6] Տես Մատենադարանի №№ 3050, 6385, 8689 և այլ ձեռագրեր:

[7] Գևորգ Սկևռացին նշանավոր մատենագիր է: Նրա գրչին են պատկանում այնպիսի գործեր, որոնք երկար ժամանակ օգտագործվել են միջնադարի մեծ ճանաչում գտած հայ դպրոցներում, իբրև անփոխարինելի դասագրքեր: Առպիսի գործերից է «Խրատ գրչութեան արուեստի» աշխատությունը, որը դասավանդվել է Գլաձորի և Տաթևի համալսարաններում և այլուր, և որի վերաբերյալ մի լուծմունք ունի Գրիգոր Տաթևացին: Սկևռացու գործերից են նաև հետևյալները. «Մեկնութիւն Գործոց Առաքելոց», «Մեկնութիւն Եսայեայ», «Լուծմունք Նարեկացւոյն» և այլն: Սակայն նրա լավագույն գործը կարելի է համարել Աստվածաշնչի յուրաքանչյուր գրքի համար գրած նախադրությունները, որոնք և իր աշակերտներից Մովսես Սկևռացու հանձնարարությամբ դրվեցին համապատասխան գրքի սկզբում, և այդ սովորությունը մտավ մեր մեջ 1270—1282 թվականներին: Մովսես Սկևռացին, ըստ Հ. Ղ. Ալիշանի, նույն Մովսես Երզնկացին է: Տես «Հայապատում», էջ 507—509:

Եվ այլ բազմաթիվ գործեր:

Այս բոլորի հետ մեկտեղ Մովսես Երզընկացուց մեզ է հասել մի կարևոր աշխատություն՝ «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագի, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն»:

«ՀԱՒԱՔՈՒՄՆ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ, ԶՈՐ ՅԱՌԱՋԱԳՈՅՆ ԱՐԱՐԵԱԼ Է ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐ ՀԱՐՑՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի 5 ձեռագրեր պարունակում են սույն աշխատությունը, որոնք բոլորն էլ ունեն միևնույն վերնագիրը (չնչին տարբերությամբ), և ոչ մի ձեռագրում չի հիշվում հեղինակի՝ Մովսես Երզնկացու անունը:

Միայն թե երկու ձեռագրերում (№№ 6738 և 7275) սույն գործը արտագրված է Մովսես Երզնկացու «Մեկնութիւն Ժամակարգութեան» աշխատությունից անմիջապես հետո, իսկ այլ երկու ձեռագրերում (№№ 2607 և 9292) վերոհիշյալ երկու աշխատությունների միջև կա Ժամակարգություն և Պատարագամատույց: Վերջին՝ № 1333 ձեռագիրը[8] պարունակում է միայն խնդրո առարկա աշխատությունը:

Այսքանը միայն, ուրիշ ոչ մի տեղեկություն կամ հիշատակություն՝ Մովսես Երզնկացու հեղինակ լինելու մասին:

Ընդհակառակն, կան հիշատակարաններ, որոնք առաջին հայացքից կարող են շփոթության տեղիք տալ:

Այսպես՝ վերոհիշյալ աշխատության մեզ հասած ամենահին ձեռագրում՝ № 9292 (1297 թ.), Պատարագի մեկնությունից անմիջապես հետո կա հետևյալ հիշատակարանը.

«Շնորհօք և առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այն որ վասն կամելոյ զկեանս ամենեցուն ընդարձակեալ աճեցոյց զօրինակս և զճանապարհս փրկութեան ըստ այլ և այլ բարոյից հասակաց և արուեստից մարդկան այլ և այլ ձևս և արուեստս փրկականս, բարձրագոյնս և խոնարհագոյնս, նրբաշափիս և անդորր ընթացս, յոլովաջանս և թեթևախոնջս, նախապատիս և երկրորդականս, զի ըստ կարի կամ յօժարութեան այսմ, կամ այլում հետևելով ոք, մի յուսահատ եղեալ ի դժուարութենէն վերջոտնեալ անհաղորդ մնասցէ փրկական ճանապարհի իմիք, այլ ըստ չափոյ զօրութեան կամ յօժարութեան ընդ մի կամ ընդ յոլովս ի ճանապարհաց հետևեալ ժամանեսցէ փրկութեան: Ցայս ամենառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ, **ես, մեղուցեալ ծառայս Աստուծոյ՝ Թորոս, սոսկ անուամբ քահանայ** ի կրօնաւորական ձևի, քանզի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանցն շաւղաց կասեցեալ՝ զարտուղի գնացիւք, մանաւանդ յաղթեալ ի ծանրութենէ հողեղէն յարկիս, և ոչ ունելով այլ ինչ տեսակ բարեաց զմտաւ ածի զի գոնէ այնու օրինակաւ շահեցայց դոյզն ինչ մասն փրկական զտխմարութեանս և զտկարութեան վիճատութիւնս ի բաց եդեալ՝ **ձեռնամուխ եղէ ի գրութիւն մեկնութեան աղօթնոյս և պատարագին, զոր մեկնեալ էին սուրբ հարքն մեծն Խոսրով և Տէր Ներսէս և այլ սուրբ Հարքն, մեծաւ աշխատութեամբ գլխաւորեալ յանկ հանի շնորհօքն Աստուծոյ:** Ի յիշատակ .... **Կատարեցաւ գիրս ի մեծ թուիս ՉԽԶ,** ի բազմաթշուառ ժամանակի ....»[9]: (Ընդգծումները մերն են—Ե. Ա. Պ.):

Մովսես Երզնկացու «Մեկնութիւն Ժամակարգութեան» աշխատությունը, ինչպես նաև խնդրո առարկա Պատարագի մեկնությունը խմբագիր աշխատություններ են:

Հետևաբար վերոտպյալ հիշատակարանի «Ձեռնամուխ եղէ ի գրութիւն մեկնութեան աղօթնոյս և պատարագին, զոր մեկնեալ էին սուրբ հարքն .... մեծաւ աշխատութեամբ գլխավորեալ յանկ հանի շնորհօքն Աստուծոյ» բառերը կարող են ենթադրել տալ, որ սույն աշխատության խմբագիր-հեղինակը վերոհիշյալ Թորոս քահանան է, քանի որ այլ հեղինակի անուն չի հիշվում:

Այստեղ հիշենք, որ Թորոս քահանան № 9292 ձեռագրի գրիչն է:

Նա է արտագրել նաև № 2607 ձեռագիրը, ուր դարձյալ Պատարագի մեկնությունից անմիջապես հետո կա իր հիշատակարանը—գրեթե նույն հիշատակարանը, տարբերվում է միայն հիշման ենթակա անձանց անուններով և թվականով. «Կատարեցաւ գիրս ի մեծ թուիս ՉԽԹ» (փոխանակ «ՉԽԶ»-ի): Եւ ոչ մի հիշատակություն նախորդ ձեռագրի կամ այն մասին, որ այդ գործը ավելի վաղ է գրվել:

---

[8] Սույն ձեռագրի վերջում կա հետևյալ հիշատակարանը. «Սոյն գիրք օրինակեալ կամ հաւաքեալ յաշտարակեցի Գրիգոր վարդապետէ Վարդազարեանց, ի թուին 1820» (էջ 47ա):

Հետևելով սույն հիշատակարանին, Մ. եպս.-ը 1820 թվականին ձեռագրի սկզբում՝ էջ 0, գրել է հետևյալը. «Մեկնութիւն Պատարագի Հարց սրբոց ժողովեալ ի Գրիգոր Վարդապետէ Վարդազարեանց Աշտարակեցւոյ յամի ազգին ՌՄՀ և փրկչական 1820, տեղին անյայտ, անյիշատակարան»:

Այս, իհարկե, սխալ է: Սույն աշխատությունը Երզնկացունն է, իսկ Գրիգոր վարդապետը ընդօրինակել է այն, ինչպես ասված էր էջ 47ա-ի հիշատակարանում: Եվ այստեղից էլ այս սխալը անցել է Մատենադարանի «Ցուցակ Ձեռագրաց»-ին: Տես Ա հատոր, Երևան, 1965, էջ 528:

[9] Տես Մատենադարանի № 9292 ձեռագիրը, էջ 306ա—306բ:

Այստեղից արդեն պարզ է դառնում, որ «ՁԽԶ» և «ՁԽԹ» թվականները ցույց են տալիս ոչ թե Պատարագի մեկնության գրության թվականը, այլ №№ 9292 և 2607 ձեռագրերի ընդօրինակման թվականը: Որով կասկածի տակ է դրվում Թորոս քահանայի հեղինակ լինելու հարցը:

Այս ավելի է հաստատվում մեկ այլ՝ № 7275 ձեռագրի հիշատակարանով, դարձյալ գրված սույն Պատարագի մեկնությունից հետո.

«Շնորհօք և առատ գթութեամբ մարդասիրին Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այն որ վասն կամելոյ զկեանս ամենեցուն արձակեալ աճեցոյց զօրինակս և զճանապարհս փրկութեան ըստ այլ և այլ բարոյից հասակաց և արուեստից մարդկան այլ և այլ ձևս և արուեստս փրկականս, բարձրագոյն և խոնարհագոյնս, նրբաշաւիղս և անդորր ընթացս, յոլովաջանս և թեթևախոնջս, նախապատուիս և երկրորդականս, զի ըստ կարի կամ յօժարութեան այսմ, կամ այլում հետևելով ոք, մի յուսահատ եղեալ ի դժուարութենէն վերջոտնեալ անհաղորդ մնասցէ փրկական ճանապարհի իմիք, այլ ըստ չափոյ զօրութեան կամ յօժարութեան ընդ մի կամ ընդ յոլովս ի ճանապարհաց հետևեալ՝ ժամանեսցէ փրկութեան: Ցայս ամենառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալ, **ես, ամենաթշուառ երիցս ատելիս Մաթէոս յոգնամեղ ծառայս Աստուծոյ, սոսկ անուամբ քահանայ** ի կրօնաւորական ձևի, քանզի տեսեալ զիս ի բարձրագոյն առաքինութեանց շաւղաց չար ուղի գնացեալ, մանաւանդ յաղթեալ ի ծանրութենէ կաւեղէն յարկիս, ոչ ունելով տեսակ ինչ բարէաց մասն փրկութեան: Վասնորոյ **ձեռնամուխ եղէ ի գրութիւն Աստուածահաճոյ տիրապէս աղօթնոյս մեղաբաւիչ հաշտարար սուրբ պատարագին, և էր ընդ եղբարսն Յովհաննու աղօթիցն, զոր մեկնեալ էին սուրբ հարքն մեր մեծն Խոսրով և տէր Ներսէս և այլ սուրբ հարքն, զոր և հողս անարգութեան Մաթէոս խղխայթեալ տառապանօք գլխաւորեալ յանկ հանի ցայգացանկ աշխատութեամբ** շնորհօքն Աստուծոյ, ի յիշատակ .... **Գրեցաւ գիրքս թվիս ՋԶ ....»**[10]: (Ընդգծումները մերն են—Ե. Ա. Պ.):

Ինչպես պարզ երևում է, այս հիշատակարանի ձևը գրեթե նույնական է վերոհիշյալ երկու հիշատակարանների հետ՝ նույն բառերն ու նույն արտահայտություններն են, միայն այստեղ հիշվում է «Մաթէոս», փոխանակ «Թորոս»-ի, և «ՋԶ», փոխանակ «ՁԽԶ»-ի կամ «ՁԽԹ»-ի:

Արդեն պարզ երևում է, որ այս հիշատակարանները միայն գրչի վերաբերյալ են խոսում և ոչ մի կապ չունեն աշխատության հեղինակի հետ:

Իսկ ո՞վ է «Հաւաքումն Համառօտ մեկնութեան սրբոյ պատարագի....» աշխատության խմբագիր-հեղինակը:

Սույն գործից մի քանի օրինակներ կան նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրատանը, որոնցից երկուսը՝ 395 և 1236 թվահամարները կրողները, ունեն հետևյալ հիշատակարանը.

«Ի վեց հազարերորդի, չորեքհարիւրերորդի, ինքնըսներորդի և չորք թուի ելանելոյն Ադամայ ի փառակենցաղ դրախտէն, և յեթն հարիւր քառասուն ն երկու թուի հայկականս տումարի, ի դիտապետութեան Տեառն Ստեփաննոսի գերելոյն յԵգիպտացւոց, և ի թագակալութեան Հեթմոյ՝ Որդւոյ Լևոնի, առն բարեպաշտի և աստուածասիրի, Մովսէս, մեղօք մեռեալ ոգի, կամեցայ հաւաքումն առնել համառօտաբար մեկնութեանց Սրբոյ Պատարագիս, զոր սուրբ հարքն Խոսրով Անձևացեաց եպիսկոպոս և Ներսէս Տարսոնի յառաջագոյն ընդ երկար քննեալ էին, նաև զոր յայլոց սրբոց հարց ևս կարացաք բանագտակ լինել յանցն իւր տեղւոջ եդաք առ ի զբօսանս մանգանց Սիոնի: Եւ զայս ոչ թէ միայն յանձնէ կամ սիրով խիզախեցաք, այլ յորդորեալ առաւել յիմաստուն ռաբունապետէն Յովհաննու, որ և ի սոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս, որոյ շնորհեսցէ Տէր Աստուած հանգիստ և ողորմութիւն:

Արդ եթէ ումեք հաճոյ թուեսցի Տեառն շնորհ, և թէ ոչ՝ ի բունսն ընթացսի Մեկնութիւն և զմեզ անպարսաւս թողցէ, զի ըստ առն և զօրութիւն իւր, և իւրաքանչիւր ոք իւր վարձս առցէ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ է օրհնեալ ընդ Հաւր և Հոգւոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն»[11]:

Այս հիշատակարանը մեզ հնարավորություն է տալիս պարզելու մի շարք հարցեր:

Նախ այն, որ այս գործի հեղինակը Մովսես Երզնկացին է:

Երկրորդ, որ սույն գործը գրվել է Հայոց ՁԽԲ թվականին, որը հավասար է Փրկչական թվականության 1293 թվականին:

Հիշատակարանից պարզվում է նաև այն, որ Մովսես Երզնկացին այս գործը կատարել է «յորդորեալ առաւել յիմաստուն ռաբունապետէն Յովհաննու»:

Վերոհիշյալ Հովհաննես ռաբունապետը ամենայն հավանականությամբ Հովհաննես «Պլուզ» Երզնկացին[12] է (պատմությունը մեզ

---

[10] Տես Մատենադարանի № 7275 ձեռագիրը, էջ 231բ—232ա:

[11] Տես **Նորայր եպս. Պողարյան**, «Մայր ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», Բ, Երուսաղեմ, 1967 թ., էջ 322:

[12] Երկար ժամանակ բանասերները ընդունում էին, որ ԺԳ դարի վերջերին և ԺԴ դարի սկզբներին ապրել և ստեղծագործել է միայն մի Հովհաննես Երզնկացի՝ «Պլուզ», «Ծործորեցի» և այլ մականուններով: Առաջին անգամ Լ. Խաչիկանն է, որ «Պլուզ» և «Ծործորեցի» Հովհաննես Երզնկացիներին տարբերակել է միմանցից: Տես նրա «ԺԴ դարի

ԳՐԱԴԱՐԱՆ

նույն ժամանակում այլ Հովհաննես բաբունապետ չի հիշում):

Հիշատակարանից պարզվում է նաև Հովհաննես Երզնկացու մահվան թվականը՝ 1293:

*
* *

«Հաւաքումն Համառօտ Մեկնութեան Սրբոյ Պատարագին....» գրվածքը խմբագիր աշխատություն է:

Մովսես Երզնկացին այն խմբագրելիս օգտվել է շուրջ 10 աղբյուրներից, որոնցից վերցրել է հատվածներ թե՛ ամբողջությամբ և թե՛ կրճատումներով:

Աշխատությունը բաղկացած է հետևյալ մասերից.

ա.—Առաջադրութիւն Մովսէսի Երզնկացւոյ: (Վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):

Սկիզբը. «Աստուած, որ մեծն է ողորմութեամբ, անսկիզբնն և անվախճանն, անպատճառն յամենայնի և պատճառն ամենեցուն լինելութեան....»[13]:

Առաջադրության մեջ Երզնկացին խոսում է ս. հաղորդության խորհրդի հաստատման կարևորության և նրա հետ առնչվող զանազան հարցերի մասին (աշխարհի ստեղծում, առաջին մեղք, Երկնավոր Հոր մարդասիրության երևան գալը Իր Միածին Որդուն աշխարհ ուղարկելով, Որդի Աստուծո զենումը մարդկանց մեղքերի թողության և նրանց բժշկության համար, Քրիստոսի պատվերը Վերջին ընթրիքի ժամանակ. «Զայս արարէք յիմ յիշատակ» (Ղուկաս ԻԲ 19) և այլն):

Այնուհետև Երզնկացին խոսում է իր կատարած աշխատանքի դրդապատճառի մասին. «Եւ արդ քանզի երջանիկ հարքն առաջինք զխորհուրդ սրբոյ գոհութեանն յիւրաքանչիւր ժամանակս բացայայտեցին զանազան տեսութեամբք և երկարապատում բանիւք ըստ իւրեանցն մեծ ոգութեան և երկարասէր յօժարութեանցն: Իսկ մեզ զկնի եկելոցս ըստ մերումս ձանձրասէր բարուց և փոքր ոգութեամբ վհատելոց, յաւէտ հարթիկնէ յոյժ սիրելի, ըստ կարճութեան նուազեալ ժամանակի: Վասն որոյ և յօժարիմք ըստ յառաջ ասացեալ պատճառիդ զերանելեաց սրբոց հարցն երկարապատում և զանազան տեսութիւնսն ի միասին համառոտել, զի ըստ կարճ ի կարճոյ միայար շարադրութեան առձեռն պատրաստ լիցի յապագայս զկնի եկելոցդ առ ի զմայլումն սիրալիր փափագման: Զի որ հաճեսցի յայս խահ հոգևոր կերակրոյ վայելել, և սիրաբար յօժարեսցի ի վերածնութիւն սմին պարապել, պարգևատուին ամենեցուն ամենատեառնն զփառս և զգոհութիւն յաւէտ մատուցէ»[14]:

Երզնկացուն մտահոգել է մի կարևոր հարց, թե որքանո՞վ է ինքը արժանի այսպիսի մի գործ անելու և թե ի՞նչ գնահատանքի կարժանանա իր գործը ընթերցողների կողմից. «Իսկ եթէ ումեք անախորժելի և ոչ հաճելի թուեսցի արարուածս այս, ի սրբոց հարցն ի բուն մեկնութիւնսն և ի նազելի բանսն ընթասցի, որ առաջի կայ պատրաստական՝ երկարապատում ճոխութեամբ, սեղան հոգևոր լի բազմագոյն և զանազան խորտկօք և զմերս իբր զանպիտան ի բաց լքեալ թողցէ»[15]:

Այնուամենայնիվ, անկախ այն հարցից, թե ի՞նչ նպատակի կծառայի իր աշխատությունը, Երզնկացին իր խրատներն է տալիս ապագա սերունդներին ս. հաղորդության խորհրդին մասնակցելու և Քրիստոսի մեղսաքավիչ մարմինը ճաշակելու համար, հիմնականում շեշտելով հետևյալը. «Պարտ է երկիւղի զինքեանս ըստ արժանւոյն պատրաստել և ապա համարձակել մերձենալ ի ճաշակումն մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ, զի մի, որ պատճառն է կենաց և դեղն անմահութեան, դեղ մահու լինիցի վասն լրբութեամբ խիզախելոյն և անարժանութեամբ հաղորդելոյն»[16]:

բ.—Երանելւոյն Ներսիսի Տարսոնի Եպիսկոպոսի բացայայտութիւն.

1.—Թէ զի՞նչ յայտ առնէ յաւանդատունն պայծառազգեստիլն.

Սկիզբը.—Եկեղեցիս տաճար և տուն Աստուծոյ է....: Էջ 223բ:

հայերեն ձեռագրերի հիշատակարանները», Երևան, 1950, էջ 649 (ծանոթագրություն): Ապա այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Արմենուհի Սրապյանը նախ առանձին հոդվածով՝ «Պլուզ և Ծորմորեցի Հովհաննես Երզնկացիները» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957 թ., № 5), և ապա «Հովհաննես Երզնկացի» աշխատության մեջ՝ տպված Երևանում, 1958 թվականին: Այս ամենից պարզ դարձավ, որ ԺԳ դարի սկզբներին ապրել և ստեղծագործել են երկու Հովհաննես Երզնկացիներ.

ա.—Հովհաննես Երզնկացի՝ «Պլուզ» մականունով, մանկավարժ, նշանավոր մատենագիր և եկեղեցական գործիչ, 1293 թ.:

բ.—Հովհաննես Երզնկացի՝ «Ծորմորեցի» մականունով, ուսիթորական շարժման մասնակից, մատենագիր, 1326-ից հետո:

[13] Տես Մատենադարանի № 9292 ձեռագիրը, էջ 221ա:

[14] Տես նույնը, էջ 221ա—222բ:

[15] Տես նույնը, էջ 222բ:

[16] Տես նույնը, էջ 223ա:

2.—Մեկնութիւն Սաղմոսին որ նախ քան զգենուլն.
Սկիզբը.—«Յիշեա Տէր զԴաւիթ և....»:
Դաւիթ զՔրիստոս կոչէ....: Էջ 223բ—224բ:
3.—Զի՞նչ քարոզութիւն սարկաւագին յայտնսիկ.
Սկիզբը.—Ապա սարկաւագն հրամայէ....:
«Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ....»:
Այսինքն լուայք զի խոստացաւ Տէրն....:
Էջ 224բ—225ա:
4.—Մեկնութիւն քահանայական աղօթիցն.
Սկիզբը.—«Որ զգեցեալ ես զլոյս....»:
Մեծ էր և անչափ խոնարհութիւն Քսի....: Էջ 225ա—226բ:
5.—Մեկնութիւն աղօթից.
Սկիզբը.—Աստուած, Աստուած մեր....»:
Ինքն ասաց՝ Ես եմ հացն կենաց....:
Էջ 226բ—227ա:
Սկիզբը.—«Խունկ մատուցանեմք....»:
Ընդ զգալի խնկոյս...: Էջ 227ա:
Սկիզբը. — «Օրհնեալ թագաւորութիւնն Հօր....»:
Ծնորհ ունելով տուեցելոց բարեացն....:
Էջ 227ա—227բ:
6.—Մեկնութիւն Հաւատամքի. (վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):
Սկիզբը.—«Հաւատամք ի մի Աստուած....»:
Ոյք զպաշտելի և զհամաշխարհական հաւատս կարգեցին....: Էջ 227բ—241բ:
գ.—Մեծին Խոսրովու մեկնութիւն Զոր արարեալ է քարոզին, որ յետ Աւետարանին և զՀաւատամքն ասելոյ.
Սկիզբը.—«Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք....»:
Եւ ևս որ է այլ հաւատով աղաչեսցուք....: Էջ 241բ—243բ:
դ.—Մեկնութիւնք աղօթից և քարոզից (վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):
1.—(համադրաբար Խոսրովից և Ներսեսից):
Սկիզբը.—«Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս....»:
Խոս. Երկնից և երկրի գոլով տէր....:
Ներ. Զմեծութիւն ողորմութեան նորա առ մեզ....: Էջ 243բ—246բ:
2.—Խոսրովու առ այնոսիկ, որք ասենն, զի լսեմ և ոչ առնում, ապա բնաւ և ոչ լսեմ, զի մի աւելիս դատեցայց: (Վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):
Սկիզբը.—Յայսմ տեղի ասի որպէս յարձակել զժողովուրդն՝ Օրհնեա տէր, զի բեմասացութեան տեղի է, և աւարտեն զաղօթսն օրհնութեամբք և ի վարդապետութեան յունկնդրութիւն տան զանձինս, և ապա զխորհրդականն կատարեն....: Էջ 246բ—249ա:
3.—Խոսրովու մեկնութիւն քարոզիցն (վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):
Սկիզբը.—«Մի ոք յերախայից....»:
Հրամայէ, եթէ երախայ ոք իցէ....: Էջ 249ա—249բ:
Սկիզբը.—«Կացցուք առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ....»:
Որպէս ի քնոյ ընդոստացուցանէ քարոզն....: Էջ 249բ—251ա:
ե.—**Պատարագամատոյց**, էջ 251ա—304բ:
Մեկնութիւնք աղօթից և քարոզից (այս տողի վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):
Սկսվում է «Տէր Աստուած զօրութեանց» աղօթքի մեկնությունից և շարունակվում է մինչև վերջ: Երզնկացին խմբագրելով այս հատվածը հիմնականում օգտվել է Խոսրով Անձևացու և Ներսես Լամբրոնացու գրվածքներից: Հաճախ է երևում նաև Դիոնեսիոս Արիսպագացու անունը: Երբեմն երևում են «այլոյ», «այլուստ» արտահայտությունները և մեկ անգամ «Կիւրեղ» անունը:
«Եւ իջեալ ի ստորին վայրս մահու» արտահայտության մեկնության մեջ երևան են գալիս հետևյալ անունները, բացի Խոսրովից և Ներսեսից, Սարգիս, Կիւրէղ, Եփրեմ, Տիմոթէ, Սևեր, Ամոն, Աստուածաբան, Իգնատիոս, այլուստ և այլն:
Իսկ «Հայր մեր»-ի մեկնության ժամանակ Խոսրովի, Ներսեսի անունների և «այլ, այլոյ, այլուստ» արտահայտությունների հետ մեկտեղ երևան է գալիս նաև Նյուսացու անունը: «Հայր մեր»-ի մեկնությանը մասնակցել է նաև ինքը՝ Մովսես Երզնկացին:
Կան նաև մի շարք այլ հատվածներ, որոնք պատկանում են Մովսես Երզնկացու գրչին, այսպես՝
1.—«Սովաւ հանգոյ»-ի մեկնության առթիվ.
Սկիզբը.—Սա է հանգիստ յուսով ի Քրիստոս ննջեցելոց՝ ի փրկութիւն ամենայն հաւատացելոց: Սա արմատ անմահութեան և ճշմարիտ կենդանութիւն՝ հաւատով և յուսով ճաշակողաց: Սա աղբեւր ամենայն բարութեան....: Էջ 283ա—283բ:
2.—«Յիշեա Տէր»-երից հետո.
Սկիզբը.—Փառաւորեսցուք զԱստուած ի մահկանացու մարմինս մեր....: Էջ 288ա—288բ:
3.—«Հայր մեր»-ից անմիջապես առաջ.
Սկիզբը.—Արդարև շնորհքն Աստուծոյ է՝ որ տայ մեզ համարձակութիւն հայր կոչել զԱստուած....: Էջ 291ա:
4.—«Հայր մեր»-ից հետո՝ «Այլ փրկեա

զմեզ ի չարէ» արտահայտության համար.
Սկիզբը.—Չար, չար է բանսարկուն և դարձեալ չարագոյն չար....: Էջ 295ա—296ա:

5.—Ս. հաղորդության բաշխումից առաջ.
Սկիզբը.—Լուիցուք բանիցս կամակար յօժարութեամբ, մատիցուք և ճաշակեսցուք զքաղցրութիւն Քրիստոսի փրկչին մերոյ....: Էջ 300բ—302բ
և մի շարք այլ հատվածներ:

Մովսես Երզնկացու այս հատվածները աղոթքների կամ քարոզների մեկնությունից ավելի վանականի հոգու պոռթկումներն են և նրա խրատները հասարակ ժողովրդին:

զ.—Վերջաբան Մովսէսի Երզնկացւոյ (վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):
Սկիզբը.—Գոհասցուք և մեք զմարդասիրէն Աստուծոյ, երկրպագեսցուք անճառ բարերարութեան նորա, պատմաբանեսցուք զմեծասքանչ ողորմութիւն նորա...: Էջ 304բ—305բ:

Երզնկացին գոհություն է հայտնում Աստծուն, որ իր գործը ավարտին հասավ: Ապա հիշատակելով այն բոլոր բարերարությունները, որ Աստված արեց մարդկանց համար, հարց է տալիս իր ընկաններին. «Ով մարդ, զի՞նչ տացուք տրիտուր Տեառնն ընդ ամենայնի, որ շնորհեաց մեզ, այլ միայն անկեալ ի վերայ երեսաց՝ արտասուալից դիմօք զաստակս երկրի թանալով՝ գոհասցուք անդադար զբարերար Տեառնէ մերմէ»[17]:

Է.—Յիշատակարան հեղինակի (վերնագրումը մերն է—Ե. Ա. Պ.):

(Տես Նորայր եպիսկոպոս Պողարյան, «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց»—Բ, Երուսաղեմ, 1967 թ., էջ 322):

(Շարունակելի)

[17] Տես նույնը, էջ 305ա: